ԿԱՐԾԻՔ

Քանաքարա Խաչիկի Հայրապետյանի «Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը (1901-1938 թվականներին)» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քանաքարա Հայրապետյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայ առաքելական եկեղեցու 20-րդ դարի նշանավոր գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի կյանքին, հոգևոր և հասարակական գործունեությանը: Անհրաժեշտ նշել, որ աշխատանքը բավականին արդիական է, քանզի Հայ առաքելական եկեղեցու 20-րդ դարի նշանավոր գոծիչներին նվիրված աշխատություններ հայաստանյան իրականության մեջ հանդես եկան 1990-ական թվականներից սկսած: Թվում է, որ արդեն շատ բան է արվել, հրապարակվել են Վավերագրեր հայ եկեղեցու պատմության մատենաշարի երկու տասնյակից ավել հատորներ, Գարեգին Հովսեփյանին նվիրված երեք հատորով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1914-1920) երկու հատորով փաստաթղթերի և նյութերի ժողովածուները: Առաջին հայացքից թվում է, թե այս խնդիրն արդեն իր լուծումն ինչ որ կերպ ստացել է, սակայն իրական դեռևս առկա են հայոց եկեղեցու նորագույն շրջանի պատմության բազմաթիվ չուսումնասիրված էջեր, որոնք սպասում են իրենց լուսաբանմանը: Այս առումով կարևոր ենք համարում աշխատանքները այս ուղղությամբ:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է մաքուր հայերենով, ներկայացված է գիտական պատշաճ մակարդակով և ունի սկզբնաղբյուրների հարուստ ցանկ: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

Ներածության մեջ, ինչպես ընդունված է, ատենախոսը ներկայացրել է աշխատանքի արդիականությունը, հիմնական նպատակը, այդ նպատակին հասնելու խնդիրները, դրանց լուծման ուղիները և իրականացման տեսական ու

մեթոդական հիմքերը: Մանրամասն քննարկվել է բազմաբնույթ սկզբնաղբյուրներն ու օգտագործված գրականությունը:

Առաջին գլուխը վերնագրված է «Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեության վաղ շրջանը (1901-1913 թթ.)», որի երկու ենթագլուխներում ատենախոսն անդրադառնում է Խորեն Մուրադբեկյանի՝ որպես Նոր Բայազետի, ապա Գորիի բարեկարգիչ, 1909 թվականից Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ գործունեությանը հատկապես եկեղեցիաշինության և դպրոցաշինության բնագավառում, 1903թ. փակված հայկական դպրոցները 1905թ. հետո վերաբացման գործում:

Երկրորդ գլուխը, որը կրում է «Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը ժամանակի մարտահրավերներին ընդառաջ (1914-1920 թթ.)» վերնագիրը: Ատենախոսն այս գլխում ներկայացնում է Խորեն Մուրադբեկյանի ծավալած հայրենանվեր, ազգապահպան գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, նրա ծավալած գործունեություն Էջմիածնի և Երևանի եղբայրական օգնության հանձնաժողովներում, հարաբերությունները ռուսական բարձրաստիճան զինվորականների և այլ պաշտոնյաների հետ հայ գաղթականության խնդիրների առնչությամբ: Վերլուծել և գնահատել Խորեն Մուրադբեկյանի՝ որպես Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցչի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին իշխանությունների հետ հարաբերվելիս, նրա, որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ 1920թ. Սփյուռքում ծավալած, այդ թվում դիվանագիտական, գործունեությունը:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում և Հայ առաքելական եկեղեցին»: Այս գլխում ատենախոսը փորձել է ներկայացնել և վերլուծել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատելուց հետո իշխանությունների կողմից եկեղեցու նկատմամբ կիրառվող քայքայիչ գործունեությունն ու դրա դրսևորման ձևերը և այդ ամենի համատեքստում՝ Խորեն Մուրադբեկյանի՝ որպես կաթողիկոսի լիազոր ներկայացուցչի գործունեությունն իշխանությունների հետ հարաբերվելիս՝ ներկայացնելով նրա կատարած քայլերը եկեղեցու իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ, կոմունիստական կուսակցության ամբողջատիրության համակարգի պայմաններում հայ ժողովրդի ճակատագրին առնչվող

պատմական զարգացումները, Սփյուռք-եկեղեցի փոխհարաբերությունները ներկայացվել ու վերլուծվել են ժամանակաշրջանի իրողությունների համատեքստում, ըստ այդմ նաև վերլուծվել և գնահատվել է Խորեն Մուրադբեկյանի գործունեությունը Հայ առաքելական եկեղեցու համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրներին լուծում տալու փորձերը՝ որպես կաթողիկոսի տեղակալի:

Աշխատանքի չորրորդ գլխում «Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյան» վերնագրով՝ ներկայացված է Խորեն Մուրադբեկյանի կաթողիկոսական շրջանի գործունեությանը: Ներկայացվել և վերլուծվել է Խորեն Մուրադբեկյանի Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու գործընթացը, խորհրդային իշխանությունների կողմից ընտրությունները խոչընդոտելու և հետաձգելու պատճառները, քննվել և վերլուծվել են ստալինյան բռնաճնշումների շրջանում Խորեն Մուրադբեկյանի՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի եկեղեցապահպան, ազգապահպան գործունեությունն ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում, վերլուծվել են Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի մահվան հետ կապված առկա տվյալները, բացահայտվել Խորեն Մուրադբեկյանի մահվան նախօրեին պետության՝ եկեղեցու հանդեպ ունեցած առանձնահատուկ դիրքորոշման իրական դրդապատճառները և այդ ամենի համատեքստում, հիմնվելով ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի փաստերի վրա, ներկայացվել են Խորեն Մուրադբեկյանի մահվանն առնչվող փաստերը:

Եզրակացության մեջ ատենախոսը ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները, դրանցից բխող եզրահանգումները, իսկ հավելվածում ներկայացված են որոշ փաստաթղթեի պատճեններ:

Քանաքարա Հայրապետյանի ատենախոսությունը արդիական է և ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն՝ Հայ առաքելական եկեղեցու պատմության մի շարք հարցերի լուսաբանման և հետագա ուսումնասիրողների համար: Գրախոսվող ատենախոսությունը թեմայի ընդգրկման առումով առաջիններից մեկն է և պետք է ասել, որ ատենախոսին, ընդհանուր առմամբ հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները:

Այժմ կցանականայի գրախոսվող աշխատանքի վերաբերյալ ներկայացնել մի քանի սխալներ ու նկատառումներ:

1. Աշխատանքի որոշ գլուխներ ու ենթագլուխներ չունեն գիտական բնույթ և հիշեցնում են գիտահանրամատչելի ստեղծագործության վերնագրեր: Այսպես, երրորդ գլխի ենթագլուխները վենագրված են «Նոր իրականությունը (1920-1923թթ.)» և «Հարմարվողականության գործընթացը», իսկ չորորդ գլուխը՝ «Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյան», որոնք, կարծում եմ, գիտական հայեցակարգ չունեն:

2. Ատենախոսությունում օգտագործվել է պատմագիտությունում այլևս հնացած «խորհրդային կարգ» (էջ 4) հասկացությունը «խորհրդային իշխանության» փոխարեն և «սովետների համագումար» (էջ 150)՝ «խորհուրդների համագումարի» փոխարեն:

3. Ատենախոսությունում խոսք է գնում Գորիի թեմի մասին (էջ 23, 172), իրականում այդպիսի թեմ չի եղել:

4. Ատենախոսությունում օգտագործվել է Կարս-Ղարաքիլիսա ճանապարհին գտնվող Ձինգելի լեռնանցք տեղանունը (էջ 53), որը սխալ է, այդպիսի անունով լեռնանցք չկա, պետք է լինի Ձինգիլի լեռնանցք, որը գտնվում է Իգդիր-Բայազետ ճանապարհին: Ատենախոսության հավելվածում լեռնանցքը ներկայացված է զույգ անունով Ձինգել (Ձինգիլ)՝ հղում կատարելով Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանին, սակայն այդ բառարանում Ձինգել տեղանուն չկա:

5. Ատենախոսությունում Սարգիս Կասյանը ներկայացված է որպես Հայաստանի ներքին գործերի ժողկոմ (էջ 83), որը սխալ է, նա 1921թ. փետրվարի 7-ին եղել է հեղկոմի նախագահ, ներքին գործերի ժողկոմը Իսահակ Դովլաթյանն էր:

6. Ատենախոսության 108 էջում ներկայացված է Խորեն և Գևորգ արքեպիսկոպոսների 1926թ. նոյեմբերի 17-ի հանդիպումները ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանի, արդարադատության ժողկոմ Ա. Կարինյանի և կոմկուսի կենտկոմի քարտուղար Ա. Հովհաննիսյանի հետ: Տվյալները սխալ են, այդ ժամանակ ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահը Արտաշես Կարինյանն էր, Ս. Կասյանը կենտգործկոմի նախագահ է դարձել 1928թ., արդարադատության ժողկոմը՝ Լևոն Վարդապետյանը:

7. Խորեն Ա Մուրադբեկյան մահը ներկայացնելիս տուրք է տրված չստուգված, անհիմն ենթադրությունների: Պետք է նկատի ունենալ, որ եթե դա սպանություն էր

հատուկ ծառայությունների կողմից, ապա նրանք ոչ մի հետք չէին թողի (հաղորդալար, մարմնին հետքեր և այլն) և ոչ մի Փիրուզ կամ գարաժի Լևոն չէին օգտագործի:

8. Անհասկանալի է, երբ ատենախոսության 170-171 էջերց պարզվում է, որ Խորեն Ա Մուրադբեկյանի աճյունի վերաթաղումը Ս. Գայանե վանքից Մայր տաճար տեղի է ունեցել երկու անգամ՝ մեկը 1941թ., մյուսը՝ 1996թ.:

Իհարկե վերը նշված թերությունները չեն կարող ազդել այն ծավալուն աշխատանքի վրա, որ կատարել է ատենախոսը՝ մասնագիտական խորհրդին ներկայացնելով բավականին հաջողված ատենախոսություն: Հետևաբար, Քանաքարա Խաչիկի Հայրապետյանի «Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը (1901-1938 թվականներին)» ատենախոսական աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացրած պահանջներին, ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող Մասնագիտական խորհրդին, նրան շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ որին միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյան

պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյան ստորագրությունը հաստատում եմ

Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյան

18.01.2024թ.